Փոքր և Միջին Ձեռնարկատիրության
Համագործակցության Ասոցիացիա

agricultural alliance
Գյուղատնտեսական դաշինք

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան «14 » հունիս 2017թ.

Սույն փոխըմբռնման հուշագիրը կնքվում է «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ի (այսուհետ՝ Ասոցիացիա) և Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի (այսուհետ՝ Դաշինք, իսկ Ասոցիացիան և Դաշինքը միասին՝ Կողմեր) միջև:

Կարևորելով ՀՀ-ում բիզնես շահերի պաշտպանության արդյունավետությունը, դրա համար պայքարելու հրատապությունը,

հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված գործուն մեխանիզմների և համատեղ քայլերի անհրաժեշտությունը,

գնահատելով Դաշինքի դերը ֆերմերների շահերի պաշտպանության և գյուղատնտեսության ոլորտում ռազմավարությունների բարելավման գործում և Ասոցիացիայի դերը՝ որպես մասնագիտացված կառույցի՝ Փոքր բիզնեսում ներգրավված անձանց շահերի պաշտպանության պայքարում,

նկատի ունենալով Կողմերի պատրաստակամությունը՝ համագործակցելու գյուղատնտեսության և բիզնես ոլորտի պաշտպանության և համապատասխան օրենսդրական կարգավորումների բարելավման գործընթացներում,

Կողմերը կնքեցին սույն Փոխըմբռնման Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի նպատակները

Հուշագրի նպատակն է համագործակցել վերը նշված շրջանակներում և օժանդակել կողմերի միջև համագործակցության սերտացմանը, որը կնպաստի Հայաստանի տնտեսության կայուն զարգացմանը:

Կողմերը միավորում են իրենց ջանքերը հետևյալի շուրջ՝

- Նպաստել գյուղատնտեսության ոլորտում շահերի պաշտպանության բնագավառում առկա հիմնախնդիրների լուծմանը,
- Օժանդակել գյուղատնտեսության ոլորտում ռազմավարական գործընթացներին, օրենսդրության ընթացակարգային և համակարգային բարեփոփոխումների իրականացմանը՝ համատեղ քննարկումների կազմակերպման և առաջարկությունների ներկայացման միջոցով,
- Իրականացնել համատեղ քայլեր՝ ուղղված ագրոբիզնեսի զարգացմանը և խթանել գյուղատնտեսության ոլորտում ներդրումների ներհոսքը:

2. Համագործակցության հիմնական սկզբունքները

Սույն Հուշագիրը սահմանում է Կողմերի միջև համագործակցության հետևյալ սկզբունքները.

- Կողմերի միջև համագործակցությունը հիմնված է ՀՀ օրենսդրության և Կողմերի կանոնադրությամբ սահմանված և սույն Համաձայնագրի դրույթների վրա,
- Համագործակցության ընթացքում Կողմերն առաջնորդվում են փոխադարձ վստահության և ժողովրդավարության սկզբունքներով:

3. Համագործակցության ուղղությունները

Կողմերը համաձայնվում են համագործակցել հետևյալ ուղղություններով՝

- Իրենց գործունեության ընթացքում ՀՀ-ում ֆերմերների, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերատիվների և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող այլ մասնավոր ընկերությունների իրավունքների պաշտպանության, այդ ոլորտներում հանդիպող և առկա հիմնախնդիրներին վերաբերյալ տեղեկատվության օպերատիվ փոխանակում,
- Ոլորտում առկա հիմնախնդիրների, ֆերմերների շահերի ոտնահարման դեպքերի մասին համատեղ հրապարակային հայտարարություններով ելույթների իրականացում, Համատեղ ուժերով լայնածավալ իրազեկման աշխատանքերի իրականացում,
- Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող գործունեությանը վերաբերող փորձի փոխանակում,
- Կողմերի՝ սույն համաձայնագրից բխող միջոցառումներին փոխադարձ մասնակցության ապահովում,
- Գյուղատնտեսության ոլորտում ներգրավված անձանց պաշտպանության և ոլորտում կատարվող աշխատանքների մասին տեղեկատվության համակարգում և փոխադարձ փոխանակում, հասանելիության ապահովում հասարակությանը՝
- Համագործակցություն շահառուների հետ,

- Օրենսդրության մեջ առկա բացերի լրացման ինչպես նաև թերությունների շտկմանն ուղղված օրենսդրական և այլ առաջարկների համատեղ մշակում:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Հուշագիրն անժամկետ է, և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
4.2 Հուշագիրը կարող է դադարեցվել կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին ծանուցելով Հուշագրի դադարեցման պահից տասնհինգ օր առաջ:
4.3 Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:
4.2. Սույն Հուշագիրը կազմված է երեք էջից, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից:

Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի համանախագահողներ՝

Վարդան Ուռուտյան

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն»

Կ.Տ

«ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ՝

Արտակ Մանուկյան

Կ.Տ

Մարգարիտա Հակոբյան

Օքսֆամի Հայաստանյան գրասենյակ

Կ.Տ

Մերի Նիկողոսյան

«ՎԻՍՏԱՍ փորձագիտական կենտրոն» խորհրդատվական կազմակերպություն

Կ.Տ